

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

### ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2016թ. փետրվարի 5-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 33-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

#### ՕՐԱԿԱՐԳ

1. **Գիտական հաղորդում:**
2. **Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:**
3. **2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և արդյունքների ամփոփում:**
4. **Ընթացիկ հարցեր:**

#### 1. **ԼՄԵՑԻՆ. Գիտական հաղորդում (զեկ.՝ Քաղաքացիական դատավարության ամբիոն):**

Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, դոց. Ս.Մեղրյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու գործընթացի և դրա արդյունքների վերաբերյալ: Անդրադառնալով ընթացիկ իրավիճակին և առկա խնդիրներին՝ զեկուցողը նշեց, որ ՀՀ գործող քաղաքացիական դատավարության օրենսգիրքը Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումների արդյունքում ընդունված կարևոր իրավական ակտերից է, որն ընդունման պահին բավականին առաջադիմական էր, սակայն օրենսգիրքն իր դրական հատկանիշներով հանդերձ զերծ չէ նաև թերություններից, որոնց մի մասը առկա էին օրենսգրքի ընդունման պահին, իսկ մյուսներն ի հայտ եկան դրա գործնական կիրառման ընթացքում: Օրենսգրքի գործածության ընթացքում դրանում բացահայտված մի շարք թերություններ ու բացթողումներ իրենց գնահատականն են ստացել նաև ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում: Վերոհիշյալ խնդիրները ամբողջությունը, ինչպես նաև հասարակական հարաբերությունների մշտական զարգացումը ի վերջո հանգեցրել են ՀՀ գործող քաղաքացիական դատավարության օրենսգրքում հիմնարար փոփոխություններ կատարելու օբյեկտիվ անհրաժեշտության: Ընդ որում, «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-

2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի 01.07.2012թ. կարգադրությամբ նախատեսվեցին դրույթներ՝ ուղղված քաղաքացիական արդարադատության արդյունավետության բարձրացմանը: Ապա զեկուցողն անդրադարձավ նոր խմբագրությամբ շարադրվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծի ընդհանուր բնութագրին: Դոց. Ս.Մեղրյանը նշեց, որ Նախագծի առաջնային ուղղություններից է նախնական դատական նիստի նշանակության բարձրացումը: Նախագծում հստակ կանոնակարգվել են դատաքննության ընթացքը և դրա ընթացքում դատավարական գործողությունների կատարման հաջորդականությունը, մեկ գլխի մեջ սահմանվել են դատական նիստի ընդհանուր կանոնները, որոնք կիրառելի կլինեն դատական վարույթի բոլոր փուլերի համար, Նախագծի առանձին հոդվածներում տրվել են քաղաքացիական դատավարության օրենսգրքում առավել շատ կիրառվող հասկացությունների ցանկի սպառիչ սահմանումներ: Ի կատարումն ՀՀ Նախագահի 2009թ. ապրիլի 21-ի թիվ ՆԿ-59-Ն կարգադրությամբ հաստատված «Դատաիրավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագրից բխող միջոցառումների» ցանկի՝ նախագծով փորձ է արվել կատարելագործել դատական փորձաքննության նշանակման և անցկացման գործընթացը: Նախագծում կատարելագործվել են ապացուցման պարտականության (օրինակ՝ ժխտող անձի վրա չի կարող դրվել հակառակն ապացուցելու պարտականությունը), ապացույցի թույլատրելիության, վերաբերելիության, ապացույցների գնահատման կանոնները, ապացուցման կարիք չունեցող փաստերի շրջանակը: Նախագծում էական փոփոխություններ են կատարվել դատական ծախսերին դատական ծանուցումներին և ծանուցագրերին վերաբերող վերաբերող գլուխներում: Նախագծով էականորեն կատարելագործվել են դատական ակտերի կառուցվածքներին ներկայացվող պահանջները, պարզեցված վարույթները, արագացված դատաքննությունը և վճարման կարգադրությունների վարույթները: Որպես նոր վարույթի տեսակ նախատեսվել է նաև հեռակա դատաքննությունը: Նախագծում առանձնակի ուշադրություն է դարձվել նոր երևան եկած և նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի՝ որպես բացառիկ փուլի համապարփակ իրավակարգավորումների ապահովման խնդրին: Նախագծով կատարելագործվել է վերաքննության ինստիտուտը: Վերաքննիչ դատարանի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու և արդյունավետությունը բարձրացնելու նկատառումով որպես ընդհանուր կանոն սահմանվել է վերաքննիչ բողոքի քննության գրավոր ընթացակարգը: Նախագծով նախատեսվել է նաև խմբային հայցի վարույթը: Ավարտելով զեկուցումը դոց. Ս.Մեղրյանը հույս հայտնեց, որ Նախագիծն ընդունվելու դեպքում կկենսագործվեն «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության նախագահի 01.07.2012թ. կարգադրությամբ նախատեսված քաղաքացիական արդարադատության արդյունավետության բարձրացման ուղղված միջոցները, կապահովվի դատավարությունում մրցակցության և գործը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքների

կենսագործումը, առաջին աստիճանի և վերաքննիչ դատարաններում գործերի միատեսակ քննությունը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Գ.Դանիելյանը, դոց. Գ.Կոստանյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաղորդումն ընդունել ի գիտություն (հաղորդումը կցվում է):

**2. ԼՍԵՑԻՆ.** Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Վաղարշյանը):

Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի վարիչ պրոֆ. Ա.Վաղարշյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում իր ղեկավարած ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Հ.Խաչիկյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

**3. ԼՍԵՑԻՆ.** Հաղորդում 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և արդյունքների:

Դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյանն ներկայացրեց ընդհանուր բնույթի տեղեկություններ 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և արդյունքների մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Ս.Դիլբանդյանը, դոց. Ս.Մեղրյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաղորդումն ընդունել ի գիտություն (հաղորդումը կցվում է):

**4. Ընթացիկ հարցեր**

**5.1 ԼՍԵՑԻՆ.** Ֆակուլտետի երրորդ կուրսում ազատ հաճախման ներդրման և դրանով պայմանավորված՝ գործնական պարապմունքների անցկացման մեթոդների հստակեցման հետ կապված հարցեր:

Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը տեղեկացրեց, որ նախատեսվում է իբրև պիլոտային ծրագիր ֆակուլտետի երրորդ կուրսում ներդնել ազատ հաճախում լսարանային պարապմունքներին, իսկ մասնակցության համար նախատեսված 2 միավորը որոշվելու է համապատասխան դասընթացին հատկացված գործնական պարապմունքներին ուսանողի ներկայության և մասնակցության աստիճանով: Ըստ այդ, դեկանը հատուկ կարևորեց

գործնական պարապմունքներ անցկացնողների ոչ միայն պատշաճ մասնագիտական պատրաստվածությունը, այլև գործնական պարապմունքների անցկացման արդյունավետ մեթոդների մշակումը: Դեկանը վերջում հավելեց, որ մեթոդխորհրդի նախագահ, դոց. Ա.Մարգարյանի կողմից մշակվում է գործնական պարապմունքներին մասնակցության համար նախատեսված 2 միավորը որոշելու չափանիշներ սահմանող կանոնակարգի նախագիծ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաղորդումն ընդունել ի գիտություն:

**5.2 ԼՍԵՑԻՆ.** 2016-2017 ուսումնական պլաններում փոփոխությունների հետ կապված հարցեր:

Խորհրդի նախագահ, դեկան Գ.Ղազինյանն առաջարկեց ամբիոններում քննարկել և առաջարկներ ներկայացնել առաջարկներ ուսումնական պլաններում առարկաների փոփոխություններ, կիսամյակների տեղաշարժ կատարելու վերաբերյալ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաղորդումն ընդունել ի գիտություն:

**5.3 ԼՍԵՑԻՆ.** DataLex դատական տեղեկատվական համակարգում զետեղված նոր՝ «ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների շտեմարան» բաժնի ներկայացում (զեկ.՝ ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալ, ԴԽՍ քարտուղար Ա.Վարդապետյան):

Ա.Վարդապետյանն ընդհանուր գծերով ներկայացրեց DataLex դատական տեղեկատվական համակարգում զետեղված նոր՝ «ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների շտեմարան» բաժինը, դրանից օգտվելու կանոնները՝ նշելով, որ մշակվելու է նաև այդ բաժնից օգտվելու ուղեցույց:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Ս.Առաքելյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաղորդումն ընդունել ի գիտություն:

**5.4 ԼՍԵՑԻՆ.** ԵՂՀ իրավագիտության ֆակուլտետի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունը:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Վ.Հովհաննիսյանը ներկայացրեց հեռակա ուսուցման մագիստրասական թեզերի պաշտպանության ընթացքը և արդյունքները:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը:  
**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաղորդումն ընդունել ի գիտություն:

**5.5 ԼՍԵՑԻՆ.** Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Նազելի Թովմասյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Վ.Ստեփանյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:  
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Նազելի Թովմասյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Ներդրումների միջազգային իրավական պաշտպանությունը» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք»:

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոց. Վ.Քոչարյանին:

**5.6 ԼՍԵՑԻՆ.** Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում դասավանդվող «Միջազգային հումանիտար իրավունք» առարկան «Միջազգային մարդասիրական իրավունք» վերանվանելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում դասավանդվող «Միջազգային հումանիտար իրավունք» առարկան վերանվանել «Միջազգային մարդասիրական իրավունք»:

**5.7 ԼՍԵՑԻՆ.** 2016-2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի համար անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, դեկանի տեղակալ, պրոֆ. Հ. Խաչիկյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը՝ որպես անվանական կրթաթոշակի թեկնածուներ՝ երաշխավորել հետևյալ անձանց.

1. Գաբուզյան Քրիստինե Արայի (մագիստրատուրա, 2-րդ տարի)՝ Մխիթար Գոշի անվան կրթաթոշակ.
2. Ղազարյան Տիգրան Սամվելի (մագիստրատուրա, 2-րդ տարի)՝ Գրիգոր Զոհրապի անվան կրթաթոշակ.
3. Պետրոսյան Լիլիթ Հովհաննեսի (մագիստրատուրա, 2-րդ տարի)՝ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի սահմանած Վ. Ներսեսյանցի անվանական կրթաթոշակ:

4. Սադոյան Եվա Գագիկի (մագիստրատուրա, 2-րդ տարի)՝ Յուրի Ղամբարյանի անվան կրթաթոշակ:

**5.8 ԼՄԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015թ. գիտական նստաշրջանի նյութերի ժողովածուի տպագրության երաշխավորության հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, դեկանի տեղակալ, պրոֆ. Հ. Խաչիկյանը, պրոֆ. Ա. Գաբուզյանը, պրոֆ. Ս. Դիլբանդյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

Երաշխավորել տպագրության ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015թ. գիտական նստաշրջանի նյութերի ժողովածուն:

*Խորհրդի նախագահ*

*Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար*

*Տ.Սուջյան*